

**ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան
Ֆիզմաթ հատուկ դպրոց**

ՁԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2021-2026 ԹԹ

Հավակնորդ՝ Սարգսյան Տիգրան

Երևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ.....	2
ԴՊՐՈՑԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ	3
ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ	4
ԴՊՐՈՑԻ ՆՊԱՏԱԿԸ	5
ՌԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ.....	6
ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	6
ԽՆԴԻՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ԼՈՒԾՎԵՆ	7
ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁԻՔ	11
ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	11

ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան Ֆիզմաթ հատուկ դպրոցը (այսուհետ՝ Դպրոց) ստեղծվել 1965 թ. և այն առաջին դպրոցն էր, որը նախատեսված էր մաթեմատիկա առարկայից արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար: 1984 թ.- ին դպրոցը տեղափոխվել է Ազատության պող. 2-րդ նրբ., թիվ 9 հասցեում գտնվող իր նոր բնօրանը: Ֆիզմաթ դպրոցը նոր տարածքում ունի 11500 քառ.մ տարածք, ուսումնական և հանրակացարանայի մասնաշենքեր, գրադարան, դահլիճ, ճաշարան և դեկորատիվ ու մրգատու ծառերով հագեցած կանաչապար այգի:

Այժմ Դպրոցն իրականացնում է հանրակրթական և հատուկ հանրակրթական ծրագրեր՝ իր գերնպատակը համարելով օլիմպիական նոր կադրերի բացահայտումը և պատրաստումը: Ամեն տարի դպրոցի 100-150 շրջանավարտներից շատերը իրենց ուսումը շարունակում են տեղի և միջազգային բարձրակարգ համալսարաններում և

դառնում հասարակության, այսօրվա համար շատ կարևոր, կրթված ու զարգացած լիիրավ անդամներ:

Դպրոցում դասավանդում են բազմափորձ, գիտական աստիճան ունեցող, ինչպես նաև պետական պարգևների արժանացած ուսուցիչներ: Դպրոցի աշակերտներն օգտվում են նյութատեխնիկական, լաբորատոր ամբողջ բազայից, կրթաթոշակ ստանալու իրավունքից և այլն:

Դպրոցի գործունեությունն ուղղված է բնագիտական ոլորտում դպրոցական մակարդակի գիտելիքների մեծ պաշար ունեցող շրջանավարտների պատրաստմանը, կրթական բովանդակության համապատասխանեցմանը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև հավասարության ապահովմանը: Ամեն տարի բնագիտական առարկաներից Զանրապետական օլիմպիադաներին հաղթած երեխաների մեծ մասը ֆիզմաթիցիներ են լինում, իսկ միջազգային օլիմպիադաներից մեդալներ շահած հայ աշակերտների մեջ նորից գերակշռում են ֆիզմաթի աշակերտները:

ԴՊՐՈՑԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

- ✓ Լինել կրթական, տեխնոլոգիական և ինժեներական համակարգի տարածման և զարգացման կենտրոն, պահպանել կրթական բարձր չափանիշներ և հնարավորություն տալ սովորողներին լիարժեք կերպով իրացնելու իրենց ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջներին բավարարող կրթություն:
- ✓ Ստեղծել կոլեգիալ միջավայր, որն առաջարկում է մի շարք ծառայություններ և ծրագրեր՝ խթանելով աշակերտների ներգրավվածությունն ու հաջողությունները:
- ✓ Ավելացնել աշակերտների համար արտալսարանային միջոցառումների քանակը և տեսակը ու խթանել նրանց մասնակցությունը ազգային, տարածաշրջանային և միջազգային մրցույթներին:
- ✓ Աշակերտների կրթությունը բարձր մակարդակով կազմակերպելու համար կատարել մի շարք հարցումներ, հետազոտություններ, ուսումնասիրություններ՝ աշակերտներին, աշխատակիցներին և ուսուցիչներին:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

- ✓ Լինելով ազգային կրթական համակարգի մի մասնիկ, տեխնոլոգիական մասնագիտական հմտությունների ձեռքբերմանը և քաղաքացիական ու բարոյական որակների ձևավորմանը նպաստող ուսումնական հաստատություն, Դպրոցի հիմնական առաքելությունն է. գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը, սովորողների ազգային մտածելակերպի ձևավորումը, սեփական գործելակերպն ու որոշումները ազգային շահերին համապատասխանեցնելու ընդունակ քաղաքացիների պատրաստումը՝ կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:
- ✓ Դպրոցը, լինելով հանրակրթական ոլորտի մեջ առաջատարներից, գտնվում է մեծ մարտահրավերների և փոփոխությունների ժամանակաշրջանում, որը պայմանավորված է Դպրոցի կրթության բարձրորակ մատուցման, տեխնոլոգիական և ինժեներական ոլորտի արագընթաց զարգացումով և մասնագետների պահանջարկի մեծացումով: Դպրոցը չի կարող դիմագրավել այս մարտահրավերներին՝ առանց վերազնահատելու և վերանայելու իր դերը և պատասխանատվությունը, առանց մեծացնելու փոփոխվելու և փոփոխություններին հարմարվելու իր ինստիտուցիոնալ կարողությունը, առանց ժամանակակից միջոցների ներդրմանը յուրաքանչյուր դասաստեյակում, առանց իր աշխատակիցների մտավոր ռեսուրսի խորը ուսումնասիրման և լիարժեք օգտագործման, առանց Դպրոցի շրջանավարտների և ծնողական համայնքի ներգրավվման:
- ✓ Կարևորելով և գիտակցելով կրթության դերն ու նշանակությունը՝ Դպրոցն առաքելություն ունի նաև հասարակության մեջ ձևավորել գիտելիքի, մասնագետի և կրթության մասին այն արժեքների և ընկալումների համակարգը, որն անհրաժեշտորեն պետք է ուղված լինի մեր քաղաքացու, հասարակության և տեխնոլոգիական ու ինժեներական ոլորտում պետության զարգացմանը և հզորացմանը:
- ✓ Դպրոցն իր 56-ամյա գործունեության ընթացքում կարողացել է ձևավորել բանիմաց, տարիների փորձ ունեցող մանկավարժական կոլեկտիվ, բարի համբավ, ինչպես

արդեն պատրաստի, այնպես էլ նոր կառուցվող լաբորատորիաներ, տարիների աշխատանքի շնորհիվ ձևավորված ավանդույթներ, մեծ շենքային և բակային տարածքներ, ֆիզիկապարակներ, գրադարան:

ԴՊՐՈՑԻ ՆՊԱՏԱԿԸ

- ✓ Ունենալով որակյալ կրթական միջավայր՝ լինել կրթական, ինժեներական կենտրոնատեղի, որն իր շրջանավարտներին պատրաստում է մասնագիտական կարիերային և ակտիվ հասարակական կյանքին՝ գլոբալացված հասարակության պահանջներին համապատասխան:
- ✓ Նպաստել կրթական ծառայությունների շուկայի ձևավորմանը և այդ շուկայում առաջարկվող ծառայությունների համապատասխանեցմանը ներկայումս արդեն իսկ ուրվագծվող ապագայի կենսական պահանջներին, դրանց բազմազանությանը մատուցվող ծառայությունների թե՛ բովանդակության և թե՛ ձևի առումով:

ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ճշտել այն ռազմավարական խնդիրների ցանկը, որոնք պետք է պատրաստ լինի լուծել Դպրոցը՝ ժամանակակից աշխարհին համապատասխանող գիտելիքներ ունեցող շրջանավարտ պատրաստելու համար՝ նախապատվություն տալով այնպիսի ռազմավարությունների, որոնք հնարավորություն են տալիս համեմատաբար փոքր ներդրումներով ստանալ առավելագույն արդյունք:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մեր ժամանակաշրջանը բնութագրվում է ազգային և համաշխարհային տնտեսությունների անընդհատ վերակառուցմամբ, արդյունաբերական տնտեսության՝ որպես գիտելիքների տնտեսության և հասարակության՝ որպես գիտելիքների կամ տեղեկատվական հասարակության վերափոխմամբ, տեղեկատվական նորագույն տեխնալոգիաների ներդրմամբ, աշխատանքային միջավայրի վերաբաշխմամբ՝ ժողովրդավարության և ազատական տնտեսության վրա հենվելով, քաղաքացիական հասարակության ձևավորմամբ:

Այս պայմաններում կրթության դերն աճում է, կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը, զարգացնելով

ԵՊՅ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան Ֆիզմաթ հատուկ դպրոց

համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և այլ արժեքավոր որակներ: Անհրաժեշտություն է առաջանում բարեփոխել հանրակրթությունն այնպես, որ.

- ✓ հանրակրթության բովանդակությունը արդիականացվի և կատարելագործվի
- ✓ բարելավվի անձի ու քաղաքացու ձևավորումը՝ բարոյական դաստիարակությունը, բարձրացվի սովորողների մոտիվացիան
- ✓ խրախուսվեն և խթանվեն ուսուցման կազմակերպման այլընտրանքային ձևերը
- ✓ բարձրացվի դպրոցի կառավարման գործում ծնողների մասնակցության ակտիվությունը
- ✓ խրախուսվի ուսուցիչների ստեղծագործական միտքը , մասնակցությունը <<Տարվա լավագույնի մրցույթին>>
- ✓ հարստացվի դպրոցի նյութատեխնիկական բազան
- ✓ դպրոցը վերագինվի տեխնոլոգիական նոր սարքավորումներով

Այս գործընթացը ժամանակատար գործընթաց է, որին հասնելու համար դպրոցի մանկավարժական կոլեկտիվից պահանջվում է լուրջ և նպատակաուղղված աշխատանք և ժամանակ, գիտելիքների վերագինում, նոր մեթոդների կիրառում, ատեստավորում, տարակարգի շնորհում:

ԽՆԴԻՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Ե ԼՈՒԾՎԵՆ

Յիմնախնդիր 1 *Ուսումնական գործընթացից դուրս մնացած երեխաների ուսուցումը կազմակերպել և իրականացնել հեռավար եղանակով:*

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Նման երեխաներին օրենքով սահմանված ժամկետում բացահայտել:
- Ամեն դասարանում տեղադրել համակարգիչ և օժանդակ այլ տեխնիկա:

Յիմնախնդիր 2 *Մոտիվացնել ուսուցչական կազմին:*

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Մեթոդափոփոխումների և ամբիոնների միջոցով կազմակերպել ուսուցիչների մասնագիտական որակների բարելավմանն ուղղված ծրագրեր: Յետագոտել միջազգային առաջավոր փորձը, և փորձել ներդնել դպրոցում:
- Ավելի ակտիվացնել դասախոսներ և քննարկումներ:
- Մասնագիտական կատարելագործման խթանման նպատակով ներդնել մանկավարժական կազմի աշխատանքի գնահատման տարբերակման մեխանիզմ՝ ըստ գործունեության արդյունքների և աշխատանքի արդյունավետության և ըստ դրա սահմանել հավելավճարներ:

Յիմնախնդիր 3 *Շարունակել ձևավորել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր:*

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Ստեղծել և զարգացնել սովորողների ամենամյա տարեվերջյան հարցումների գործընթացը:
- Մշտապես բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել ուսումնական լաբորատոր բազան: Դրա համար ներգրավվել նորանոր հովանավորներ և ներդնողներ:
- Ներդնել աշակերտների գիտելիքների ստուգման համակարգչային թեստային համակարգ:

Յիմնախնդիր 4 *Իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ լրացուցիչ արտաբյուջետային միջոցներ ներգրավելու նպատակով: Դառնալ ավելի նախաձեռնող Դպրոցի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնման և դրանց բազմազանեցման հարցերում:*

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

ԵՊՅ-ին առընթեր ԱՇահինյանի անվան Ֆիզմաթ հատուկ դպրոց

- Մշակել ուսուցման նոր ծրագրեր և իրականացնել կարճաժամկետ դասընթացներ ոչ ֆիզմաթի աշակերտների համար :
- Կատարել սովորողների նախասիրությունների հաշվառում և դպրոցում իրականացնել վճարովի կրթական ծրագրեր՝ կամավորության սկզբունքով /պայմանագրային հիմունքներով:
- Մասնակցել տարբեր կրթական ծրագրերով հայտարարվող պարբերական մրցույթների:
- Նախաձեռնել և իրականացնել ծրագրեր և միջոցառումներ՝ բարերարների, դոնորների և այլ աջակցողների սվիրատվությունները, շնորհները և ներդրումային ծրագրերը լուսաբանելու և հանրությանը ներկայացնելու համար: Նրանց հետ զարգացնել և պահպանել երկարաժամկետ գործակցային հարաբերություններ:
- Օգտագործել տեղի մանկավարժների ինչպես նաև Ֆիզմաթի շրջանավարտների ներուժը:

Յիմնախնդիր 5 *Բարձրացնել կառավարման արդյունավետությունն ու վարչական ծառայությունների որակը: Վերսկսել արտադպրոցական միջոցառումները, ճանաչողական էքսկուրսիաները:*

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Պահպանել հստակեցված լիազորությունների և պատասխանատվության բաշխումը կառավարման տարբեր մակարդակների միջև:
- Չարգացնել աշակերտական ինքնավարությունը, ընդլայնել և խորացնել աշակերտական խորհրդի մասնակցությունը՝ որպես ներկայացուցչական մարմին, Դպրոցի կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում:
- Խթանել դասարանական աշակերտական ու ծնողական խորհուրդների և դասարանի ղեկավարի միջև փոխգործակցությանը:

Յիմնախնդիր 6 *Ակտիվ մասնակցություն բերել Ազգ-Բանակ հայեցակարգի իրականացմանը:*

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

ԵՊՅ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան Ֆիզմաթ հատուկ դպրոց

- Առավել կարևորել Նախնական զինվորական պատրաստություն և ֆիզիկական դաստիարակություն առարկաների դասավանդումը: Դպրոցում ապահովել նպաստավոր պայմաններ:
- Միջոցներ ձեռնարկել զինվորական պատրաստվածության պարագաները համալրելու և մարզագույք ձեռքբերելու համար:
- Ակտիվորեն մասնակցել կազմակերպվող ներդպրոցական, միջդպրոցային, համայնքային, քաղաքային, հանրապետական ռազմամարզական միջոցառումներին:

Յիմնախնդիր 7 Դպրոցում ստեղծել ուսումնական նոր միջավայր:

Այս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է.

- Կառուցել ընթերցասրահ որը կնպաստի ուսումնական միջավայրի բարելավմանը, աշակերտների անձնային շփումների զարգացմանը, գիտելիքների զարգացմանը:
- Ֆիզիկայի դասավանդումը ամբողջովին իրականացնել կաբինետային համակարգով:
- ապահովել կիսամյակային ամփոփիչ ստուգողականների բարձր արդյունքը:
- ակտիվ մասնակցություն դպրոցական մակարդակում օլիմպիադաներում, մարզային և հանրապետական մակարդակում օլիմպիադաներին:
- Սովորողների հետ տարվող անհատական աշխատանքներում խորհրդատվությունը ապահովելու, սովորողների սոցիալական զարգացմանը նպաստելու նպատակով, դպրոցում աշխատանքներ տանել հոգեբանի ծառայություններն ուժեղացնելու ուղղությամբ:

Յիմնախնդիր 8 *Անհրաժեշտ է փոփոխություն կատարել դպրոցի կանոնադրության մեջ, ըստ որի, ոչ օրինակելի վարք դրսևորած, կամ դժվար դաստիարակվող աշակերտ ունենալու դեպքում, դպրոցը իրավունք կունենա միակողմանի լուծել ծնողի հետ կնքված պայմանագիրը, և աշակերտին հեռացնել Ֆիզմաթ հատուկ դպրոցից:*

Յիմնախնդիր 9 *Անհրաժեշտ է հիմնանորոգել դպրոցի սանհանգույցները:*

Վերանորոգումը պետք է կարտարվի ամառային արձակուրդների ընթացքում և բոլոր հարկերում միաժամանակ:

ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁԻՔ

1. Տնօրինություն
2. Ուսուցիչներ
3. Դասղեկ-դաստիարակներ
4. Սովորողներ, սովորողների ծնողներ
5. Այլ շահագրգիռ անձիք

ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. ռազմական դրությունը
2. համաճարակները
3. արտակարգ և ֆորսմաժորային իրավիճակները